

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

---

2 դեկտեմբերի 2008թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ  
ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄՆԵՐԻ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

Սույն կանոններով սահմանվում է Հայաստանի Ֆոնդային Բորսայում պետական պարտատոմսերի Գործակալների կողմից պետական պարտատոմսերի գնանշումների իրականացման կարգը:

#### **Գլուխ 1. Հասկացություններ**

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) **«Առևտրային համակարգ»**. էլեկտրոնային եղանակով Բորսայի կողմից հրապարակային առևտրի կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման համար Բորսայում օգտագործվող տեխնիկական, ծրագրային և այլ միջոցների համախումբ:
- 3) **«Առևտրային նստաշրջան»**. աշխատանքային օրվա ժամանակահատված, որի ընթացքում Բորսայի կանոններով սահմանված կարգով կազմակերպվում է պետական պարտատոմսերի հրապարակային առևտուր:
- 4) **«Պետական պարտատոմսերի շուկայի մասնակից»**. Բորսայի կանոնների համապատասխան պետական պարտատոմսերի բորսայական առևտրին մասնակցելու իրավունք ունեցող կազմակերպություն:
- 5) **«Բորսա»**. «Հայաստանի Ֆոնդային Բորսա» Բաց Բաժնետիրական Ընկերություն:
- 6) **«Գործակալ»**. պետական պարտատոմսերի շուկայի մասնակից, որը Թողարկողի և ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված պայմանագրով ստանձնել է ուղենիշային պետական պարտատոմսերը իր անունից և իր հաշվին գնանշելու պարտավորություն:
- 7) **«Գնանշողի կարգավիճակ»**. Գործակալին Բորսայի կողմից տրվող կարգավիճակ, որից բխում են Գործակալի համար սույն կանոններով սահմանված իրավունքները, արտոնություններն ու պարտականությունները:
- 8) **«Հայտ»**. առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված՝ տվյալ թողարկման (տրանշի) պետական պարտատոմսերի գնման/վաճառքի առաջարկ, որտեղ նշվում են Բորսայի կանոններով սահմանված այդ առաջարկի բավարարման բոլոր էական պայմանները:
- 9) **«Գնանշում»**. պետական պարտատոմսերով գործարքներ կնքելու նպատակով առևտրային համակարգում պետական պարտատոմսի գնման և/կամ վաճառքի գնի հայտարարում:
- 10) **«Երկկողմանի գնանշում»**. առևտրային համակարգում Գործակալի կողմից տվյալ թողարկման պետական պարտատոմսերի առնվազն մեկ գնման և մեկ վաճառքի գնի միաժամանակյա հայտարարումը:
- 11) **«Գնանշման ծավալ»**. հայտով գնման կամ վաճառքի ներկայացված պետական պարտատոմսի անվանական ծավալ:
- 12) **«Գործակալի սպրեդ»**. Գործակալի կողմից առևտրային համակարգ մուտքագրված համապատասխան թողարկման պետական պարտատոմսերի գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների համապատասխանող՝ պարտատոմսի եկամտաբերությունների տարբերության առավելագույն թույլատրելի սահման:
- 13) **«Թողարկող»**. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:
- 14) **«Պետական պարտատոմս»**. Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված պետական (գանձապետական) պարտատոմսեր:
- 15) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:

#### **Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ**

- 1) Բորսան Գնանշողի կարգավիճակ կարող է շնորհել միայն Գործակալին: Գնանշողի կարգավիճակը շնորհվում է առանձին՝ ըստ բորսայական առևտրին թույլատրված ուղենիշային պետական պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման:
- 2) Պետական պարտատոմսերի նույն թողարկման Գնանշողի կարգավիճակ կարող է շնորհվել մի քանի Գործակալի:

- 3) Գործակալին որևէ թողարկման պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակի շնորհումը տվյալ Գործակալի համար լրացուցիչ արտոնություններ և/կամ սահմանափակումներ չի առաջացնում այլ թողարկման պետական պարտատոմսերի նկատմամբ:

**Գլուխ 3. Գնանշողի կարգավիճակով Գործակալի գործունեությանը ներկայացվող պահանջները**

- 1) Գնանշողի կարգավիճակ ստացած Գործակալը պարտավոր է՝
  - ա) պետական պարտատոմսերի առևտրային նստաշրջանի բացման պահից առավելագույնը 5 (հինգ) թույն հետո մինչև պետական պարտատոմսերի առևտրային նստաշրջանի փակման պահը տվյալ թողարկման պետական պարտատոմսերով անընդհատ ապահովել երկկողմանի գնանշում, բացառությամբ սույն կետի բ) ենթակետով և սույն կանոնների 4-րդ գլխի 1) կետի բ) ենթակետով սահմանված դեպքերի,
  - բ) երկկողմանի գնանշման ընթացքում գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքում երեք թույնում ապահովել նոր երկկողմանի գնանշում,
  - գ) երկկողմանի գնանշման ընթացքում ապահովել տվյալ թողարկման պետական պարտատոմսերի համար սահմանված նվազագույն գնանշման ծավալը՝ մասնակի բավարարման պայմանով,
  - դ) պետական պարտատոմսերի առևտրային նստաշրջանի ընթացքում պետական պարտատոմսերով երկկողմանի գնանշումը կատարել սույն կանոններով սահմանված սպրեդի սահմաններում,
  - ե) սույն առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ թողարկման պետական պարտատոմսերով երկկողմանի գնանշման փաստացի կատարված յուրաքանչյուր երեք փոփոխության հաշվարկով տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքել առնվազն մեկ գործարք:
- 2) Եթե առևտրային նստաշրջանի ընթացքում սույն գլխի 1) կետի գ) և/կամ դ) ենթակետերով սահմանված նվազագույն գնանշման ծավալի և/կամ սպրեդի չափերը խախտվել են առևտրային համակարգում կնքված գործարքի արդյունքում, ապա Գործակալը պարտավոր է երեք թույնում, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ ամբիջապես վերականգնել նվազագույն գնանշման ծավալի և/կամ սպրեդի՝ սույն կանոններով սահմանված չափերը:
- 3) Առևտրային նստաշրջանի ընթացքում Գործակալի ընթացիկ պահի դրությամբ սպրեդը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ.ԸՄ = \frac{(\text{Ե կ}_{\text{ԱՌ.Բ}} - \text{Ե կ}_{\text{ԱՎՃԱՆՔ}})}{\text{Ե կ}_{\text{ԱՎՃԱՆՔ}}} \times 100\%$$

որտեղ՝

Գ.ԸՄ - Գործակալի ընթացիկ պահի դրությամբ սպրեդի չափն է,

$\text{Ե կ}_{\text{ԱՌ.Բ}}$  Գործակալի կողմից առևտրային համակարգ ընթացիկ պահի դրությամբ իր անունից և իր հաշվին մուտքագրված՝ տվյալ թողարկման պետական պարտատոմսերի գնման հայտերի ամենաբարձր գնին համապատասխանող տարեկան եկամտաբերությունն է:

$\text{Ե կ}_{\text{ԱՎՃԱՆՔ}}$  Գործակալի կողմից առևտրային համակարգ ընթացիկ պահի դրությամբ իր անունից և իր հաշվին մուտքագրված՝ տվյալ թողարկման պետական պարտատոմսերի վաճառքի հայտերի ամենացածր գնին համապատասխանող տարեկան եկամտաբերությունն է:

- 4) Գործակալի ընթացիկ պահի դրությամբ սպրեդը չպետք է գերազանցի 5 (հինգ) տոկոսը:
- 5) Պետական պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման (տրանշի) համար գնման կամ վաճառքի հայտում նշվող նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է տվյալ թողարկման պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

**Գլուխ 4. Գործակալի իրավունքները**

- 1) Գործակալն իրավունք ունի՝

- ա) փոփոխել երկկողմանի գնանշումը սույն կանոններով սահմանված՝ Գործակալի սարեղի սահմաններում,
  - բ) չկատարել երկկողմանի գնանշման պարտավորությունը տվյալ թողարկման պետական պարտատոմսերի համար, եթե տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում իր անունից և իր հաշվին տվյալ թողարկման պետական պարտատոմսերով կնքած գործարքների ընդհանուր անվանական ծավալը գերազանցում է տվյալ թողարկման պետական պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափը:
- 2) Գործակալն իրավունք ունի Բորսայի առևտրային համակարգում գործարքներ կնքել իր անունից և հաճախորդների հաշվին, որոնց վրա չեն տարածվում Գործակալի նկատմամբ սույն կանոններով սահմանված պահանջները, արտոնությունը և սահմանափակումները:

**Գլուխ 5. Գնանշողի կարգավիճակի շնորհման կարգը**

- 1) Գործակալին բորսայական առևտրին թույլատրված որևէ թողարկման ուղենիշային պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակ շնորհելու մասին որոշումն ընդունում է Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը՝ սույն գլխով սահմանված կարգով:
- 2) Գործակալը բորսայական առևտրին թույլատրված որևէ թողարկման պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակ ստանալու համար պետք է սույն կանոնների Հավելված 1-ին համապատասխան Բորսա ներկայացնի Գնանշողի կարգավիճակի հայցման դիմում (այսուհետ՝ նաև Դիմում): Դիմումը կարող է ներկայացվել յուրաքանչյուր պետական ուղենիշային պարտատոմսերի թողարկման օրվանից սկսած ցանկացած աշխատանքային օր:
- 3) Դիմումը ներկայացված է համարվում Բորսայում դրա ստացման պահից: Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը դիմումի ստացման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում պետք է դիմումի մերժման կամ բավարարման մասին որոշում ընդունի:
- 4) Գործակալին որևէ թողարկման պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակը շնորհված է համարվում Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի համապատասխան որոշման ընդունման օրը, սակայն տվյալ թողարկման պետական պարտատոմսերի առաջին տեղաբաշխման օրվանից ոչ շուտ:

**Գլուխ 6. Գնանշողի կարգավիճակի հայցման դիմումի մերժումը**

- 1) Գնանշողի կարգավիճակի հայցման դիմումը մերժվում է, եթե՝
  - ա) դիմումում պահանջվող տեղեկությունները լիարժեք չեն կամ դրանցում փաստ է խեղաթյուրվել,
  - բ) դիմումի քննարկման ժամանակահատվածում կասեցվել է տվյալ Գործակալի՝ Բորսայում գործարքներ կնքելու իրավունքը,
  - գ) դիմումում նշված պետական պարտատոմսերը թողարկված չեն,
  - դ) առկա է օրենքին կամ դրան համապատասխան ընդունված այլ որոշումներին (նորմատիվ իրավական ակտերին) և Բորսայի կանոններին որևէ անհամապատասխանություն:
- 2) Դիմումի մերժման մասին Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշման մեջ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:
- 3) Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը չի կարող սույն գլխով չնախատեսված հիմքերով դիմումի մերժման մասին որոշում ընդունել:
- 4) Դիմումի մերժման դեպքում պետական պարտատոմսերի շուկայի մասնակիցն իրավունք ունի որևէ թողարկման պետական պարտատոմսերի Գործակալի կարգավիճակի հայցման վերաբերյալ նոր դիմում ներկայացնել սույն կանոններով սահմանված ընդհանուր կարգով:

**Գլուխ 7. Գնանշողի կարգավիճակի դադարեցումը**

- 1) Պետական պարտատոմսերի շուկայի մասնակցի՝ Գնանշողի կարգավիճակը Բորսայում ինքնաբերաբար դադարում է, եթե՝
  - ա) ամբողջությամբ հետգնվել և/կամ մարվել են այն թողարկման պետական պարտատոմսերը, որոնց համար պետական պարտատոմսերի շուկայի տվյալ մասնակցին շնորհվել է Գնանշողի կարգավիճակ,

- բ) դադարել է բորսայական առևտրին մասնակցելու տվյալ կազմակերպության թույլտվությունը,
- գ) դադարել է պետական պարտատոմսերի շուկայի տվյալ մասնակցի՝ Գործակալի կարգավիճակը,
- դ) ՀՀ օրենսդրությունում, ՀՀ այլ իրավական ակտերում և/կամ Բորսայի կանոններում տեղի են ունեցել այնպիսի փոփոխություններ, որոնք անհնարին են դարձնում տվյալ թողարկման պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակով տվյալ կազմակերպության հետագա գործունեությունը:

**Գլուխ 8. Գնանշողի կարգավիճակով Գործակալի գործունեության արտոնությունը**

- 1) Եթե գործարքի կողմը գործարքի առարկա պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակ ունեցող Գործակալն է, ապա նրա համար, որպես արտոնություն, սահմանվում և Բորսայի կողմից նրանից գանձվում է նվազեցված բորսայական միջնորդավճար, քան սահմանված է տվյալ թողարկման պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակ չունեցող՝ պետական պարտատոմսերի շուկայի այլ մասնակիցների համար:
- 2) Սույն գլխի 1) կետով սահմանված բորսայական միջնորդավճարների չափերը սահմանվում են Բորսայի «Պետական պարտատոմսերի առևտրի կանոններով»:

**Գլուխ 9. Կանոնների պահպանման վերահսկումը**

- 1) Սույն կանոնների պահանջների պահպանման վերահսկողությունն իրականացվում է Բորսայի և Թողարկողի կողմից:
- 2) Բորսան սույն կանոնների պահանջների հայտնաբերված խախտումների վերաբերյալ Թողարկողին համապատասխան տեղեկանքներ է ներկայացնում՝ նշելով հայտնաբերված խախտումների բնույթը և նկարագիրը: Տեղեկանքի ձևը և ներկայացման պարբերականությունը սահմանվում է Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ՝ համաձայնեցնելով Թողարկողի հետ:
- 3) Սույն կանոնների պահպանման վերահսկողության շրջանակներում ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Գլուխ 10. Անցումային դրույթներ**

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:
- 2) Հավելվածը սույն կանոնների բաղկացուցիչ մասն է և կանոնների հետ կազմում է մեկ միասնական փաստաթուղթ:

**Հաստատված է**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ**  
**դիտորդ խորհրդի որոշմամբ**

\_\_\_\_\_ **Յոհան Ֆրեդիոլմ**

**«13» հունիսի 2008թ.**  
**ք. Երևան**  
**ՀՖԲ-01/098Լ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻ  
Գործադիր մարմնի ղեկավարին

Գնանշողի կարգավիճակի հայցման դիմում

Սույնով հայցվում է \_\_\_\_\_-ին շնորհել  
(դիմորդի լրիվ հայերեն անվանումը)

Բորսայում առևտրին թույլատրված \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ,  
(նշվում է պետական պարտատոմսի ծածկագիրը) (բորսայական հապավումը)

ուղենիշային պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակ:

**Միաժամանակ պարտավորություն ենք ստանձնում պահպանել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» Բաց Բաժնետիրական Ընկերության «Պետական պարտատոմսերի գործակալների գնանշումների կանոններով» սահմանված և Գործակալի գործունեությանը ներկայացվող բոլոր պահանջները, ինչպես նաև քարեխղճորեն կատարել Գնանշողի կարգավիճակից բխող և Բորսայում կատարված գործունեության արդյունքում մեր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները:**

\_\_\_\_\_  
(Գործադիր մարմնի ղեկավարի  
անուն, ազգանուն)

\_\_\_\_\_  
(Գործադիր մարմնի ղեկավարի  
պաշտոնը)

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

\_\_\_\_\_  
(ամսաթիվ)

Կ.Տ.